ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 34

10 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱԳՐԱՎԱՆ) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 4.75245 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-022-0157-Ի8) ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2009 թվականի մարտի 31-ի թիվ 37-Ա հրամանով տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 31.01.2013 թվականի ՇԱԹՎ-29/400 (նախկին14/586) թույլտվությունը, լեռնահատկացման 31.01.2013 թվականի թիվ ԼՎ-400 ակտը, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 31.01.2013թվականի թիվ ՊՎ-400 պայմանագիրը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 105 դրական եզրակացությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող (բնակավայր՝ Բագրավան) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0157- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող **4.75245** հեկտար հողամասը տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 15 տարի ժամկետով (մինչև՝ 13.03.2034 թվական), 119000 (մեկ հարյուր տասնինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «Արթուր Մուրադի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հետագայում ընկերություն):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյանին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2) Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ հողատարածքի կադաստրային քարտեզում տեղ գտած սխալները ուղղելուց հետո:

3. Հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ - 10	Դեմ՝ - 0	Ձեռնպահ՝ - 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			

ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	----------	----------	----------
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	----------	----------	----------
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	----------	----------	----------
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ	----------	----------	----------
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	----------	----------	----------
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ	----------	----------	----------
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ	----------	----------	----------
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	----------	----------	----------
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ	----------	----------	----------
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունիսի 10
Քաղաք Մարալիկ